

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«04» ապրիլի 2023թ.

2023 թվականի մարտի 31-ին տեղի ունեցավ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ ՀԽ) նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցի վերաբերյալ համապատասխան նյութերը նախապես ներկայացվել էին Հոգաբարձուների խորհրդի անդամներին «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով:

Օրակարգում ընդգրկված էր հետևյալ հարցը.

1. Մրցութային կարգով ընտրված՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) հաստատում:

Քվեարկությանը մասնակցել են՝

- | | |
|-----------------|---|
| Գ. Սանոսյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀԽ նախագահ |
| Ա. Ղուլարյան | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ |
| Ս. Թովմասյան | ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ |
| Ա. Հովհաննիսյան | ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ |
| Ք. Ղալեչյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ |
| Ա. Ավանեսյան | ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀԽ անդամ |
| Ա. Իսախիրյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ |
| Գ. Խաչատրյան | ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար, ՀԽ անդամ |

Քվեարկությանը չի մասնակցել՝

Ա. Ադիլխանյան ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, ՀԽ անդամ

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 8 կողմ, 0 դեմ:

Հեռակա կարգով քվեարկության արդյունքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Մրցութային կարգով ընտրված «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությանը հաստատել որպես «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աուդիտ իրականացնող անձ (աուդիտոր):

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝



Գ. Սանոսյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝



Ա. Հայրապետյան